ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Բրյուսել, 2009թ. ապրիլի 2
(OR. անգ)

2008/0069 (COD) PE-CONS 3746/08

EDUC 295
SOC 821
CODEC 1916

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Թեման: ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ Մասնագիտական Կրթության և Ուսուցման Որակի Ապահովման Եվրոպական Հենքային Շրջանակի հաստատման վերաբերյալ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մասնագիտական Կրթության և Ուսուցման Որակի Ապահովման Եվրոպական Հենքային Շրջանակի հաստատման վերաբերյալ

(Տեքստն ըստ ԵՏՏ-ի չափանիշի համապատասխանության)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հաշվի առնելով Եվրոպական Միության հիմնադրման միջազգային պայմանագիրը, մասնավորապես պայմանագրի 149(4) և 150(4) հոդվածները,

Հաշվի առնելով Հանձնաժողովի առաջարկը,

Հաշվի առնելով Եվրոպական Տնտեսական և Սոցիալական Կոմիտեի դիրքորոշումը[1],

Հաշվի առնելով Տարածաշրջանների Կոմիտեի դիրքորոշումը[2],

Գործելով համաձայն պայմանագրի 251 հոդվածում սահմանված ընթացակարգի[3],

---

1 2008թ. հոկտեմբերի 23-ի դիրքորոշում (Պաշտոնական հանդեսում դեռ չի հրատարակվել):

2 OJ C 325, 19.12.2008, էջ 48

3 Եվրոպական Կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի դիրքորոշում (Պաշտոնական հանդեսում դեռ չի հրատարակվել)

Մինչդեռ.

1) Անցումը դեպի գիտելիքահենք տնտեսություն (Լիսաբոնի Եվրոպական Խորհուրդ 2000) պահանջում է մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) համակարգերի արդիականացում ու շարունակական զարգացում՝ ի պատասխան տնտեսությունում և հասարակությունում կատարվող արագընթաց փոփոխությունների, որպեսզի դրանք կարողանան օգնել՝ մեծացնելու զբաղվածությունը, սոցիալական ներգրավումը, ինչպես նաև կատարելագործելու ցկյանս ուսումնառություն մուտքի հնարավորությունը բոլորի համար՝ ներառյալ հատուկ կարիքավոր մարդկանց:

2) 2002թ. Բարսելոնի Եվրոպական Խորհուրդը սահմանեց մինչև 2010թ. Եվրոպայի կրթության և ուսուցման համակարգերը համաշխարհային որակի հենք դարձնելու թիրախը:

3) 2005-2008թթ. Աճի և Աշխատանքների համար Լիսաբոնի ինտեգրած ուղենիշները կոչ են անում անդամ պետություններին՝ մշակելու ցկյանս ուսումնառության հասանելի և մատչելի համակարգեր, որոնք արագ կարձագանքեն գիտելիքահենք տնտեսության և հասարակության փոփոխվող կարիքներին: Կրթության և ուսուցման համակարգերի տեղայնացումն ու կարողությունների ձևավորումն անհրաժեշտ է՝ կատարելագործելու նրանց համապատասխանությունն աշխատաշուկային: Ուստի, կրթության և ուսուցման քաղաքականությունում սահմանված նպատակները պետք է աստիճանաբար լրացնեն տնտեսական և աշխատաշուկայի քաղաքականության նպատակներին՝ միավորելով սոցիալական կապակցվածությունն ու մրցունակությունը:

4) Հետևելով Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում եվրոպական ընդլայնված համագործակցությանն աջակցելու վերաբերյալ Խորհրդի 2002թ. դեկտեմբերի 19-ի Որոշմանը[1] (կոպենհագենյան գործընթաց), և որպես որակի ապահովման գերակայության վերաբերյալ Հանձնաժողովի, անդամ պետությունների, սոցիալական գործընկերների, ԵՏՏ-ԵԱԱՀ ու թեկնածու երկրների միջև ծավալված գործակցության արդյունք, մշակվեց Որակի ապահովման ընդհանուր շրջանակ (ՈԱԸՇ)՝ հաշվի առնելով մասնակից տարբեր երկրների առկա «լավագույն փորձը»:

[1] OJ C 13, 18.1.2003, էջ 2

5) Համաձայն Կրթություն և Ուսուցում 2010 աշխատանքային ծրագրի վերաբերյալ Եվրոպական Խորհրդին ուղղված Հանձնաժողովի ու Խորհրդի 2004թ. համատեղ միջանկյալ զեկույցի[1]՝ ՄԿՈՒ ՈԱԸՇ-ը (որպես Կոպենհագենի Դեկլարացիայի մի մաս) և որակի ապահովման վերաբերյալ չափորոշիչների, ընթացակարգերի և ուղենիշների համաձայնեցված շարքի մշակումը[2] (կապված Բոլոնիայի գործընթացի հետ և որպես կրթության և ուսուցման համակարգերի նպատակների վերաբերյալ աշխատանքային ծրագրի մի մաս) պետք է լինեն առանցքային գերակայություններ Եվրոպայում:

6) 2004թ. մայիսին Կրթության Խորհուրդը[3] հաստատեց ՈԱԸՇ-ի մոտեցումը և հրավիրեց անդամ պետություններին ու Հանձնաժողովին՝ աջակցելու դրան կամավոր կերպով, շահագրգիռ համապատասխան կողմերի հետ միասին, իրենց համապատասխան կարողությունների շրջանակներում:

7) Մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովման եվրոպական ցանցն[4] ապահովում էր եվրոպական պլատֆորմ, որը 2004թ. Խորհրդի եզրակացությունների և Հելսինկիի Կոմյունիկեի հետագա համապատասխան քայլերի հնարավորություն էր տալիս՝ խթանելով երկրների միջև տևական համագործակցությունը:

8) 2006թ. Հելսինկիի Կոմյունիկեն կարևորեց հատկապես ՄԿՈՒ եվրոպական ընդհանուր գործիքների մշակման և իրագործման կարիքը՝ հենվելով ՈԱԸՇ-ի սկզբունքների վրա, ինչպես որ նշվում է ՄԿՈՒ որակի ապահովման վերաբերյալ Խորհրդի 2004թ. մայիսին կայացրած եզրակացություններում: Նպատակն է խթանել Մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովման եվրոպական ցանցի որակի կատարելագործման մշակույթը և ավելի ակտիվ մասնակցությունը:

9) Սույն Երաշխավորությունը հաստատում է Որակի ապահովման եվրոպական հենքային շրջանակը (այսուհետ Շրջանակ) որպես հենքային գործիք՝ աջակցելու անդամ պետություններին խթանել և մշտադիտարկել եվրոպական ընդհանուր հենքի վրա հիմնված իրենց ՄԿՈՒ համակարգերի շարունակական զարգացումը, որը ստեղծում ու զարգացնում է ՈԱԸՇ-ը: Շրջանակը պետք է նպաստի ՄԿՈՒ որակի

---

1 OJ C 104, 30.4.2004, էջ 1

2 «Եվրոպական Բարձրագույն Կրթության Տարածքի Ճանաչում», Բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների մասնակցությամբ համաժողովի զեկույցը, Բեռլին, 2003թ. սեպտեմբերի 19:

3 Խորհրդի՝ Մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովման վերաբերյալ եզրակացությունները, 2004թ. մայիսի 28:

4 ՄԿՈՒ որակի ապահովման եվրոպական ցանցը ստեղծվել է 2005թ. հոկտեմբերին Հանձնաժողովի կողմից՝ հետևելով Մասնագիտական ուսուցման Խորհրդատվական Կոմիտեի շահեկան դիրքորոշմանը: Վերջինիս անդամներին ընտրել են անդամ պետությունները, թեկնածու երկրները, ԵԱԱՀ-ԵՏՏ երկրները և եվրոպական սոցիալական գործընկերների կազմակերպությունները՝ համաձայն հստակ ընթացակարգի:

կատարելագործմանը և անդամ պետությունների ՄԿՈՒ քաղաքականության մշակումների մեծացված թափանցիկությանն ու հետևողականությանը՝ խրախուսելով փոխվստահությունը, աշխատակիցների և ուսումնառուների շարժունությունը, ինչպես նաև ցկյանս ուսումնառությունը:

10) Շրջանակը պետք է բաղկացած լինի ՄԿՈՒ պլանավորման, իրագործման, գնահատման և վերանայման որակի ապահովման ու կատարելագործման պարբերաշրջանից, որին կօժանդակեն որակի ընդհանուր չափանիշները, ցուցանիշ հանդիսացող բնութագրիչներն ու ցուցիչները: Մշտադիտարկման գործընթացները, ներառյալ ներքին և արտաքին գնահատման մեխանիզմների համակցությունը, պետք է պատշաճ կերպով սահմանեն անդամ պետությունները՝ որոշարկելու համակարգերի, գործընթացների, ընթացակարգերի ու կատարելագործման հատվածների ուժը: Շրջանակը պետք է ներառի չափագրման գործիքների կիրառումը՝ ապահովելով արդյունավետության ակներևությունը:

11) Շրջանակը պետք է կիրառել ՄԿՈՒ համակարգում, ՄԿՈՒ ապահովման և որակավորումների շնորհման մակարդակներում: Այն ապահովում է որակի պարբերաշրջանային մոտեցում, որը ներառում և փոխկապակցում է համապատասխան մակարդակներն ու դերակատարներին: Շրջանակը պետք է հատուկ շեշտ դնի որակի մշտադիտարկման և կատարելագործման վրա՝ համադրելով արտաքին ու ներքին գնահատումը, կատարելագործման վերանայումը և գործընթացները, որոնց կօժանդակի չափաբերման ու որակական վերլուծությունը: Շրջանակը պետք է հետագա զարգացման հիմք հանդիսանա եվրոպական, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում համագործակցության միջոցով:

12) Բոլոր մակարդակներում գնահատման և որակի կատարելագործման կուլտուրան խթանելու հստակ միջոցներ ապահովելիս սույն Երաշխավորությունը նպաստում է փաստերի վրա հիմնված քաղաքականության ու փորձի կիրառմանը՝ որպես հիմք ավելի արդյունավետ և անաչառ քաղաքականությունների համար՝ համաձայն եվրոպական կրթության և ուսուցման համակարգերի արդյունավետության ու անաչառության վերաբերյալ Խորհրդի և անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչների 2006թ. եզրակացությունների[1]:

13) Սույն երաշխավորությունը շրջանակն ապահովում է լավագույն փորձի որոշարկմամբ, աջակցությամբ և փոխանակմամբ ոչ միայն ազգային, այլև տեղական ու տարածաշրջանային մակարդակներով համապատասխան բոլոր ցանցերում՝ ներառյալ որակի ապահովման եվրոպական հենքային շրջանակի ցանցը:

[1] OJ C 298, 8.12.2006, էջ 3

14) Սույն երաշխավորությունը հաշվի է առնում «Կրթության և Ուսուցման որակի ապահովման ընդհանուր սկզբունքները», որոնք ներառված են Հավելված III-ում (Ցկյանս ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակի /ՈԵՇ/ հաստատման վերաբերյալ Եվրոպական Կառավարության և Խորհրդի 2008թ. ապրիլի 23-ի երաշխավորություն[1]): Շրջանակը պետք է օժանդակի ՈԵՇ-ի իրագործմանը, մասնավորապես ուսումնառության արդյունքների վկայագրման որակին: Այն պետք է խթանի նաև եվրոպական այնպիսի գործիքների իրագործումը, ինչպիսիք են ՄԿՈՒ եվրոպական կրեդիտային համակարգը, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության որոշարկման ու վավերացման եվրոպական ընդհանուր սկզբունքները:

15) Ելնելով իր չպարտավորեցնող բնույթից՝ սույն երաշխավորությունը համապատասխանում է պայմանագրի 5-րդ հոդվածում սահմանված օժանդակելիության սկզբունքին այնքանով, որքանով որ դրա նպատակն է օժանդակել և լրացնել անդամ պետությունների գործողությունը՝ նպաստելով դրանց գործակցությանը, որպեսզի հնարավոր լինի մեծացնել ՄԿՈՒ թափանցիկությունը, աջակցել շարժունությանն ու ցկյանս ուսումնառությանը: Դա պետք է իրականացվի՝ համաձայն պետական օրենսդրության և փորձի: Սույն երաշխավորությունը համապատասխանում է այդ հոդվածում սահմանված համամասնության սկզբունքին, քանի որ այն չի փոխարինում որակի ապահովման ազգային համակարգերին կամ սահմանում դրանք: Շրջանակը չի ստեղծում որակի ապահովման հատուկ համակարգ կամ մոտեցում, այլ ապահովում է ընդհանուր սկզբունքներ, որակի չափանիշներ, ցուցանիշ հանդիսացող բնութագրիչներ և ցուցիչներ, որոնք կարող են օգնել ՄԿՈՒ ապահովման ու առկա համակարգերի գնահատմանը և կատարելագործմանը:

16) Հավելված II-ում առաջարկված հենքային ցուցիչները սահմանված են՝ օժանդակելու ՄԿՈՒ համակարգերի և/կամ ապահովողների գնահատմանն ու որակի կատարելագործմանը՝ համաձայն պետական օրենսդրության և փորձի, ինչպես նաև ծառայելու որպես «գործիքների տուփ», որտեղից տարբեր կիրառողներ կարող են ընտրել այն ցուցիչները, որոնք իրենց կարծիքով ամենահամապատասխանն են որակի ապահովման իրենց ուրույն համակարգի պահանջներին: Ելնելով իրենց բնույթից ու նպատակից՝ դրանք պետք է տարբերվեն կրթության և ուսուցման ոլորտում Լիսաբոնի նպատակներին ուղղված առաջընթացը մշտադիտարկելու ցուցիչների ու հենանիշների կապակցված շրջանակի վերաբերյալ Խորհրդի 2007թ. մայիսի 25-ին կայացրած եզրակացություններում հիշատակված ցուցիչներից և հենանիշներից[2]:

---

1 OJ C 111, 6.5.2008, էջ 1
2 OJ C 311, 21.12.2007, էջ 13

17) Շրջանակը, եթե կիրառվում և մշակվում է անդամ պետությունների կողմից, կարող է օգնել նրանց՝ բարելավելու ու զարգացնելու իրենց ՄԿՈՒ համակարգերը, խթանել ցկյանս ուսումնառության ռազմավարությունները, նպաստել եվրոպական աշխատաշուկայի ինտեգրմանը և ՈԵՇ-ի իրագործմանը, ինչպես նաև աջակցել բոլոր մակարդակներում որակի բարելավման կուլտուրային՝ միևնույն ժամանակ ի նկատի ունենալով պետական կրթական համակարգերի հարուստ բազմազանությունը:

18) Սույն երաշխավորությունը պետք է նպաստի կրթության և ուսուցման համակարգերի արդիականցմանը, ուսուցման արդյունավետության կատարելագործմանը (ձգտելով երաշխավորել, որ մարդիկ ուսուցումը չեն ավարտում առանց որակավորումների), կրթության, ուսուցման ու զբաղվածության միջև փոխհարաբերությունների բարելավմանը, ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության միջև կամուրջների ստեղծմանը, ինչպես նաև ձեռք բերված փորձի վրա հիմնված որակավորումների շնորհման տարածմանը,

ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ.

1. Կիրառել և մշակել որակի ապահովման եվրոպական հենքային շրջանակը (Շրջանակ), Հավելված I-ում և II-ում սահմանված ու բնութագրված որակի չափանիշները, ցուցանիշ հանդիսացող բնութագրիչները և հենքային ցուցիչները, բարելավել և զարգացնել նրանց ՄԿՈՒ համակարգերը, նպաստել ցկյանս ուսումնառության ռազմավարություններին, ՈԵՇ-ի և շարժունքյան եվրոպական որակի կանոնադրության իրագործմանը, ինչպես նաև աջակցել բոլոր մակարդակներում որակի բարելավման ու նորարարության կուլտուրային: Շեշտը պետք է դնել ՄԿՈՒ-բարձրագույն կրթություն անցման վրա,

2. Նախագծել մոտեցում, որի նպատակը կլինի կատարելագործել որակի ապահովման համակարգերն ազգային մակարդակում և լավագույնս կիրառել Շրջանակը՝ ներգրավելով սոցիալական գործընկերների, տարածաշրջանային ու տեղական իրավասու մարմինների և համապատասխան շահագրգիռ այլ կողմերի՝ համաձայն պետական օրենսդրության ու փորձի,

3. Ակտիվ մասնակցել որակի ապահովման եվրոպական հենքային շրջանակի ցանցին (Շրջանակի ցանց)՝ որպես հիմք ՄԿՈՒ որակի կատարելագործման ընդհանուր սկզբունքների, հենքային չափանիշների ու ցուցիչների, ուղենիշների և գործիքների հետագա զարգացման համար ազգային, տարածաշրջանային ու տեղական մակարդակներում,

4. Հաստատել (որտեղ դեռ առկա չէ) ՄԿՈՒ որակի ապահովման ազգային հենքային շրջանակ, որը կապակցված է յուրաքանչյուր անդամ պետությանը բնորոշ կառուցվածքների ու պահանջների հետ և, համաձայն ազգային փորձի, միավորում է համապատասխան մարմիններին, ներգրավում է սոցիալական գործընկերներին ու շահագրգիռ բոլոր կողմերին ազգային և տարածաշրջանային մակարդակներում՝ երաշխավորելով նախաձեռնությունների իրականացումը: Հենքային կետերը պետք է.

- շահագրգիռ կողմերի լայն զանգվածին տեղեկացված պահեն Շրջանակի ցանցի գործողությունների մասին,

- ապահովեն ակտիվ աջակցություն Շրջանակի ցանցի աշխատանքային ծրագրի իրագործմանը,

- ձեռնարկեն հստակ գործողություններ՝ նպաստելու ազգային համատեքստում Շրջանակի հետագա զարգացմանը,

- նպաստեն ինքնագնահատմանը՝ որպես որակի ապահովման հավելյալ և արդյունավետ միջոց, որը տալիս է հաջողության չափման և կատարելագործման հատվածների որոշարկման հնարավորություն՝ նկատի առնելով Շրջանակի ցանցի աշխատանքային ծրագրի իրագործումը,

- երաշխավորեն, որ տեղեկատվությունն արդյունավետորեն է տրամադրվում շահագրգիռ կողմերին,

5. Նախաձեռնել իրագործման գործընթացի վերանայում յուրաքանչյուր չորս տարին մեկ՝ հիմնվելով Շրջանակի ցանցի ներքո սահմանված հենքային չափանիշների վրա և համագործակցելով Հանձնաժողովի ու անդամ պետությունների հետ (այդ վերանայումը պետք է միացնել առաջընթացի ազգային յուրաքանչյուր երկրորդ զեկույցին, որը ներառված է կրթության և ուսուցման ոլորտում եվրոպական համագործակցության ռազմավարական հետագա շրջանակի համատեքստում):

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒՂՂՈՐԴԵԼ ԴԵՊԻ ՀԵՏԵՎՅԱԼԸ.

1. Աջակցել անդամ պետություններին վերոնշյալ առաջադրանքները կատարելու գործում՝ մասնավորապես խթանելով գործակցությունն ու երկկողմ ուսումնառությունը, փորձարկումը և ուղղորդման նյութերի մշակումը, ինչպես նաև անդամ պետությունների ՄԿՈՒ որակի զարգացման վերաբերյալ տեղեկատվության ապահովումը,

2. Օժանդակել և անդամ պետությունների հետ միասին մասնակցել Շրջանակի ցանցին՝ նպաստելով հստակ առաջարկների ու նախաձեռնությունների միջոցով այս հատվածի քաղաքականության մշակմանը,

3. Երաշխավորել սույն երաշխավորության իրագործումը՝ յուրաքանչյուր չորս տարին մեկ Եվրոպական Կառավարությանն ու Խորհրդին ներկայացնելով ձեռք բերված փորձի և հետագա գործողությունների վերաբերյալ զեկույց՝ հարկ եղած դեպքում ներառելով անդամ պետությունների հետ համագործակցության արդյունքում կատարված սույն երաշխավորության վերանայումը և ներգրավելով շահագրգիռ տարբեր կողմերի,

4. Այս զեկույցի և անդամ պետությունների հետ համագործակցության հիման վրա նախաձեռնել սույն երաշխավորության իրագործման գնահատումը, իսկ հարկ եղած դեպքում՝ դրա վերանայումը:

Կատարված է.

Եվրոպական Կառավարության համար	*Խորհրդի համար*
Նախագահ	*Նախագահ*

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻՆ

Սույն երաշխավորությունը հաստատում է որակի ապահովման եվրոպական հենքային շրջանակը (Շրջանակ), որը բաղկացած է որակի ապահովման և կատարելագործման պարբերաշրջանից (պլանավորում, իրագործում, գնահատում և վերանայում)՝ հիմնված որակի չափանիշների, բնութագրիչների ու ցուցիչների ընտրության վրա, որոնք կիրառելի են և՛ ՄԿՈՒ համակարգի, և՛ ՄԿՈՒ ապահովման մակարդակների որակի կառավարման համար: Նպատակն է ոչ թե նոր չափորոշիչների ներմուծումը, այլ անդամ պետությունների ջանքերին աջակցելը՝ միևնույն ժամանակ հավատարիմ մնալով իրենց մոտեցումների բազմազանությանը:

Շրջանակը պետք է դիտարկվի որպես «գործիքների տուփ», որտեղից տարբեր գործածողներ կարող են ընտրել այն բնութագրիչներն ու ցուցիչները, որոնք իրենց կարծիքով ամենահամապատասխանն են որակի ապահովման իրենց համակարգի պահանջներին:

Առաջարկված բնութագրիչները (Հավելված I) և ցուցիչներն (Հավելված II) ապահովում են միայն ուղղորդում, հետևաբար, դրանք կարող են ընտրել ու կիրառել Շրջանակը գործածողները՝ համաձայն իրենց բոլոր պահաջների և առկա ձևաչափերի կամ դրանց մի մասի:

Դրանք կարելի է կիրառել նախնական մասնագիտական ուսուցման (ՆՄՈՒ) և/կամ շարունակական մասնագիտական ուսուցման (ՇՄՈՒ) համար՝ կախված անդամ յուրաքանչյուր պետության ՄԿՈՒ համակարգի և ՄԿՈՒ ապահովողների տեսակի համապատասխան անհատական բնորոշ գծերից:

Դրանք պետք է օգտագործվեն զուտ կամավոր հիմքի վրա՝ հաշվի առնելով իրենց հնարավոր ավելացված արժեքը, պետական օրենսդրությունը և փորձը: Դրանք չպետք է դիտարկվեն որպես հենանիշներ կամ ազգային տարբեր համակարգերի որակի և արդյունավետության միջև համեմատություններ տանելու միջոց: Այս համակարգերի որակի մշտադիտարկման պատասխանատվությունն ամբողջովին ստանձնում են անդամ պետությունները:

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԵՆՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ, ՈՐԱԿԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ[1]

Սույն հավելվածն առաջարկում է որակի ընդհանուր չափանիշներ և ցուցանիշ հանդիսացող բնութագրիչներ՝ աջակցելու անդամ պետություններին Շրջանակն իրագործելիս[2]:

Որակի Չափանիշներ	Ցուցանիշ հանդիսացող բնութագրիչներ ՄԿՈՒ համակարգի մակարդակում	Ցուցանիշ հանդիսացող բնութագրիչներ ՄԿՈՒ ապահովման մակարդակում
Պլանավորումն արտահայտում է համապատասխան շահագրգիռ կողմերի ռազմավարական տեսիլը և ներառում է ճշգրիտ նպատակներ, գործողություններ ու ցուցիչներ	ՄԿՈՒ նպատակները կրում են միջնաժամկետ և երկարաժամկետ բնույթ, կապակցված են եվրոպական նպատակներին Շահագրգիռ համապատասխան կողմերը տարբեր մակարդակներում մասնակցում են ՄԿՈՒ նպատակները սահմանելու գործում Թիրախները հաստատվում և մշտադիտարկվում են որոշակի ցուցիչների միջոցով (հաջողության չափանիշներ) Մեխանիզմները և ընթացակարգերը հաստատվել են՝ որոշարկելու ուսուցման կարիքները Տեղեկատվության	Եվրոպական, ազգային և տարածաշրջանային ՄԿՈՒ քաղաքականության նպատակներն արտահայտված են ՄԿՈՒ ապահովողների կողմից սահմանված տեղական թիրախներում Ճշգրիտ նպատակներ ու թիրախներ են սահմանվում և մշտադիտարկվում Տեղի է ունենում շարունակական խորհրդակցություն շահագրգիռ համապատասխան կողմերի հետ՝ որոշարկելու տեղական/անհատական ուրույն կարիքները Որակի կառավարման և զարգացման պարտականությունները ճշգրտորեն բաշխվում են

[1] Սույն երաշխավորությունում տեղ գտած սահմանումները հիմնված են Cedefop-ի՝ Ուսուցման որակի հատուկ եզրույթների բառարանում (աշխատանքային փաստաթուղթ, 2003թ. նոյեմբեր):

[2] Որակի ընտրված ցուցիչների հետագա շարքը մանրամասնորեն ներկայացված է Հավելված II-ում:

	քաղաքականություն է մշակվել՝ երաշխավորելու որակի արդյունքների օպտիմալ համապատասխանեցումն ազգային/տարածաշրջանային տվյալների պահպանման պահանջներին Անհատների կարողությունների ճանաչման, վավերացման ու վկայագրման չափորոշիչներ և ուղենիշներ են սահմանվել	Անձնակազմը վաղ շրջանում ներգրավվում է պլանավորման, ինչպես նաև որակի զարգացման գործում Ապահովողները պլանավորում են համատեղ նախաձեռնություններ ՄԿՈՒ այլ իրականացնողների հետ Համապատասխան շահագրգիռ կողմերը մասնակցում են տեղական կարիքների վերլուծման գործընթացին ՄԿՈՒ ապահովողներն ունենում են որակի ապահովման ճշգրիտ և թափանցիկ համակարգ

Իրագործման պլանները մշակվում են համապատասխան շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցության միջոցով և ներառում են ճշգրիտ սկզբունքներ	Իրագործման պլանները հաստատվում են սոցիալական գործընկերների, ՄԿՈՒ իրականացնողների և շահագրգիռ այլ կողմերի հետ համագործակցության միջոցով, տարբեր մակարդակներում Իրագործման պլանները ներառում են պահանջվող ռեսուրսների նկատառումը, գործածողների ընդունակությունը և աջակցության համար պահանջվող գործիքներն ու ուղենիշները Ուղենիշները և չափորոշիչները մշակվում են տարբեր մակարդակներում իրագործման համար Իրագործման պլանները ներառում են որոշակի աջակցություն ուսուցիչների և դասընթացավարների ուսուցմանը Իրագործման գործընթացում ՄԿՈՒ իրականացնողների պարտականությունները հստակ բնութագրված և թափանցիկ են Որակի ապահովման ազգային	Ռեսուրսները ներքին կարգով համապատասխանաբար հատկացվում են՝ իրագործման պլաններում սահմանված թիրախներին հասնելու նպատակով Աջակցություն է ցուցաբերվում համապատասխան և ներառական գործընկերություններին՝ իրագործելու պլանավորած գործողությունները Անձնակազմի կարողությունների զարգացման ռազմավարական պլանը որոշարկում է ուսուցիչների և դասընթացավարների ուսուցման կարիքը Անձնակազմն անցնում է պարբերական վերապատրաստում և ծավալում է համագործակցություն համապատասխան արտաքին շահագրգիռ կողմերի հետ՝ նպաստելու կարողությունների ձևավորմանն ու որակի կատարելագործմանը, ինչպես նաև բարձրացնելու կատարողականությունը

	ԵՒ/կամ տարածաշրջանային շրջանակ է մշակվել և ներառում է ուղենիշներ ու որակի չափորոշիչներ ՄԿՈՒ ապահովման մակարդակում՝ խթանելու շարունակական կատարելագործումը և ինքնակարգավորումը	
Արդյունքների և գործընթացների գնահատումն ու չափագրումը տեղի է ունենում պարբերաբար	Գնահատման մեթոդաբանություն է մշակվել՝ ներառյալ ներքին և արտաքին գնահատումը Շահագրգիռ կողմերի ներգրավումը մշտադիտարկման և գնահատման գործընթացում համաձայնեցված է և հստակ բնութագրված Որակը բարելավելու և ապահովելու ազգային/տարածաշրջանային չափորոշիչներն ու գործընթացները համապատասխան և համարժեք են հատվածի կարիքներին Համակարգերը ենթակա են ինքնագնահատման, արտաքին և ներքին վերանայման Իրագործվում են նախազգուշացման համակարգերը	Պարբերաբար իրականցվում է ինքնագնահատում ազգային և տարածաշրջանային կանոնակարգերի/շրջանակների ներքո կամ ՄԿՈՒ ապահովողների նախաձեռնությամբ Գնահատումը և վերանայումը ներառում են կրթության գործընթացներն ու արդյունքները՝ ներառյալ ուսումնառուի գոհացման ու անձնակազմի կատարողականության գնահատումը Գնահատումը և վերանայումը ներառում են համապատասխան և արդյունավետ մեխանիզմներ՝ ներգրավելու արտաքին և ներքին շահագրգիռ կողմերի Իրագործվում են նախազգուշացման համակարգերը

Վերանայում	Կիրառվում են կատարողականության ցուցիչներ Տեղի է ունենում տվյալների համապատասխան, պարբերական և համապարփակ հավաքագրում՝ չափաբերելու հաջողությունը և որոշարկելու կատարելագործման հատվածները: Մշակվել են տվյալների հավաքագրման համապատասխան մեթոդաբանություններ, օր.՝ հարցաթերթիկներ և ցուցիչներ/չափման մետրական համակարգ Վերանայում իրականացնելու համար սահմանվում են ընթացակարգեր, մեխանիզմներ և գործիքներ Գործընթացները պարբերաբար վերանայվում են, իսկ գործողության պլանները՝ մշակվում: Համակարգերը տեղայնացվում են համապատասխանաբար Գնահատման արդյունքների մասին տեղեկատվությունը հասանելի է հրապարակավ	Ուսումնառուների հետադարձ կապը հավաքագրվում է իրենց անհատական ուսումնառության փորձի, ուսումնառության և ուսուցման միջոցով: Ուսուցիչների հետադարձ կապի հետ միասին սա օգտագործվում է՝ իրազեկելու հետագա գործողությունների մասին Վերանայման արդյունքների մասին տեղեկատվությունը հասանելի է հրապարակավ

		Հետադարձ կապի և վերանայման ընթացակարգերը կազմակերպության ուսումնառության ռազմավարական գործընթացի մաս են կազմում Գնահատման գործընթացի արդյունքները քննարկվում են համապատասխան շահագրգիռ կողմերի հետ, և սահմանվում են համապատասխան գործողության պլաններ

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՄԿՈՒ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՐԱԿԻ ԸՆՏՐՎԱԾ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՆՔԱՅԻՆ ՇԱՐՔ

Սույն հավելվածն առաջարկում է որակի ընտրված ցուցիչների համապարփակ շարք, որը կարող է կիրառվել՝ նպաստելու ՄԿՈՒ համակարգերի և/կամ ՄԿՈՒ իրականացնողների գնահատմանն ու որակի կատարելագործմանը: Ցուցիչների շարքը հետագայում կմշակվի եվրոպական համագործակցության միջոցով (երկկողմ և/կամ միակողմ հիմքով)՝ հիմնվելով եվրոպական տվյալների և ազգային ռեգիստրների վրա:

Ելնելով իրենց բնույթից ու նպատակից՝ դրանք պետք է տարբերվեն կրթության և ուսուցման ոլորտում Լիսաբոնի նպատակներին ուղղված առաջընթացը մշտադիտարկելու ցուցիչների ու հենանիշների կապակցված շրջանակի վերաբերյալ Խորհրդի 2007թ. մայիսի 25-ին կայացրած եզրակացություններում սահմանված ցուցիչներից և հենանիշներից[1]:

Բացի այդ, ցուցիչների աղյուսակը չի ներառում ազգային մակարդակում միավորված ցուցիչներ այն դեպքերում, երբ դրանք առկա չեն կամ դժվար են ձեռք բերվում: Այդպիսի ցուցիչների միավորումն ազգային մակարդակում կարելի է իրականացնել ավելի ուշ փուլում՝ անդամ պետությունների, Հանձնաժողովի և որակի ապահովման եվրոպական հենքային շրջանակի ցանցի միջև համատեղ համաձայնագրի հիման վրա:

[1] OJ C 311, 21.12.2007, էջ 13

Ցուցիչ	Ցուցչի տեսակը	Քաղաքականության նպատակը
Որակի ապահովման համընդհանուր ցուցիչներ		
No 1 **Որակի ապահովման համակարգերի համապատասխանությունը ՄԿՈՒ ապահովողների համար.** ա) օրենքով սահմանված/սեփական նախաձեռնությամբ ներքին որակի ապահովման համակարգերը կիրառող ՄԿՈՒ ապահովողների մասնաբաժին բ) լիազորագրված ՄԿՈՒ ապահովողների մասնաբաժին	Համատեքստ/Մուտքային ցուցիչ	Նպաստել որակի ապահովման կուլտուրային ՄԿՈՒ ապահովման մակարդակում Մեծացնել ուսուցման որակի թափանցիկությունը Մեծացնել փոխվստահությունն ուսուցման ապահովման միջոցով
No 2 **Ներդրում ուսուցիչների և դասընթացավարների ուսուցման մեջ.** ա) հետագա ուսուցմանը մասնակցող ուսուցիչների և դասընթացավարների մասնաբաժին բ) ներդրած ֆինանսների քանակ	Մուտքային/Գործընթացային ցուցիչ	Նպաստել ուսուցիչների և դասընթացավարների սեփականության իրավունքին ՄԿՈՒ որակի զարգացման գործընթացում Կատարելագործել ՄԿՈՒ

		համապատասխանությունն աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին Ընդլայնել անհատի ուսումնառության կարողությունների ձևավորումը Կատարելագործել ուսումնառուների ձեռքբերումները
ՄԿՈՒ քաղաքականությունների որակի նպատակներին աջակցող ցուցիչներ		
No 3 **ՄԿՈՒ ծրագրերին մասնակցության ցուցանիշը.** ՄԿՈՒ ծրագրերում մասնակիցների թվաքանակը[1]՝ ըստ ծրագրի տեսակի և անհատական չափանիշների[2]	Մուտքային/Գործընթացային/Ելքային ցուցիչ	Ձեռք բերել հիմնական տեղեկատվություն ՄԿՈՒ գրավչության մասին ՄԿՈՒ համակարգի և ՄԿՈՒ ապահովման մակարդակներում Թիրախային աջակցություն՝ մեծացնելու ՄԿՈՒ մուտքի հնարավորությունը նաև թերի ունակ մարդկանց համար

[1] Հարկավոր է 6 շաբաթյա ժամանակահատված ՆՄՈ ուսուցման համար նախքան ուսումնառուն կդառնա մասնակից:

[2] Բացի սեռի և տարիքի մասին բազային տեղեկատվությունից, սոցիալական այլ չափանիշներ կարելի է կիրառել, օր.՝ դպրոցը վաղ լքողներ, բարձրագույն կրթության ձեռքբերում, վերաբնակիչներ, հատուկ կարիքավոր անձինք, գործազրկության տևողություն:

Ցուցիչ	Ցուցչի տեսակը	Քաղաքականության նպատակը
ՄԿՈՒ քաղաքականությունների որակի նպատակներին աջակցող ցուցիչներ		
No 4 **ՄԿՈՒ ծրագրերն ավարտող անձանց ցուցանիշը.** ՄԿՈՒ ծրագրերը հաջողությամբ ավարտած/լքած անձանց թվաքանակը՝ ըստ ծրագրի տեսակի և անհատական չափանիշների **No 5** **ՄԿՈՒ ծրագրերից բխող զբաղվածության ցուցանիշը.**	Գործընթացային/Ելքային/Արդյունքի ցուցիչ	Ստանալ հիմնական տեղեկատվություն կրթության ձեռքբերումների և ուսուցման գործընթացների որակի մասին Հաշվարկել գործընթացներից դուրս մնացած անձանց ցուցանիշները՝ համեմատելով մասնակցության ցուցանիշի հետ Աջակցել ուսումնառուին՝ բարեհաջող ավարտելու ծրագրերը՝ որպես ՄԿՈՒ որակի գլխավոր նպատակներից մեկը Աջակցել տեղայնացված ուսուցման ապահովմանը նաև հատուկ կարիքավոր խմբերի համար

ա) ուսուցումն ավարտելուց հետո ժամանակի նշանակված որոշակի հատվածում ՄԿՈՒ ուսումնառուների կարգավիճակը՝ ըստ ծրագրի տեսակի և անհատական չափանիշների[1] բ) ուսուցումն ավարտելուց հետո ժամանակի նշանակված որոշակի հատվածում ՄԿՈՒ ուսումնառուների զբաղվածության ցուցանիշը՝ ըստ ծրագրի տեսակի և անհատական չափանիշների	Ելքային ցուցիչ	Նպաստել աշխատունակությանը Կատարելագործել ՄԿՈՒ համապատասխանությունն աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին Աջակցել տեղայնացված ուսուցման ապահովմանը նաև հատուկ կարիքավոր խմբերի համար
No 6 **Ձեռք բերված հմտությունների օգտագործումն աշխատավայրում.** ա) ուսուցումն ավարտելուց հետո անհատների կողմից տրամադրվող տեղեկատվություն զբաղվածության մասին՝ ըստ ուսուցման տեսակի և անհատական չափանիշների	Ելքային ցուցիչ	Մեծացնել աշխատունակությունը Կատարելագործել ՄԿՈՒ համապատասխանությունն աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին

[1] ՆՄՈ համար՝ նաև գործընթացներից դուրս մնացած ուսումնառուների կարգավիճակի մասին տեղեկատվություն:

բ) ձեռք բերված հմտություններով/ կարողություններով անհատների և աշխատակիցների գոհացված լինելու ցուցանիշը	(որակական և քանակական տվյալների զուգակցում)	Աջակցել տեղայնացված ուսուցման ապահովմանը նաև հատուկ կարիքավոր խմբերի համար
Համատեքստային տեղեկատվություն		
No 7 **Գործազրկության ցուցանիշն**[1]՝ ըստ անհատական չափանիշների	Համատեքստային ցուցիչ	ՄԿՈՒ համակարգի մակարդակում քաղաքականության վերաբերյալ որոշում կայացնելու համար հիմքային տեղեկատվություն
No 8 **Խոցելի խմբերի գերակշիռ մաս.** ա) ՄԿՈՒ մասնակիցների տոկոսային հարաբերությունը, որոնք դասակարգվում են որպես հատուկ կարիքավոր խմբեր՝ ըստ տարիքի և սեռի բ) հատուկ կարիքավոր խմբերի հաջողության ցուցանիշը՝ ըստ տարիքի և սեռի	Համատեքստային ցուցիչ	ՄԿՈՒ համակարգի մակարդակում քաղաքականության վերաբերյալ որոշում կայացնելու համար հիմքային տեղեկատվություն Նպաստել ՄԿՈՒ մուտքի հնարավորությանը հատուկ կարիքավոր անձանց համար Աջակցել տեղայնացված ուսուցման ապահովմանը հատուկ կարիքավոր խմբերի համար

[1] Սահմանումն ըստ ԱՄԿ-ի և ՏՀԶԿ-ի. 15-74տ. գործազուրկ անհատներ, որոնք ակտիվորեն ձգտում են զբաղվածության և պատրաստ են՝ սկսելու աշխատել:

Ցուցիչ	Ցուցչի տեսակը	Քաղաքականության նպատակը
Համատեքստային տեղեկատվություն		
No 9 **Մեխանիզմներ՝ որոշարկելու ուսուցման կարիքներն աշխատաշուկայում.** ա) տեղեկատվություն այն մեխանիզմների մասին, որոնք մշակված են՝ որոշարկելու փոփոխության ենթարկվող պահանջները տարբեր մակարդակներում բ) նրանց արդյունավետության ակնհայտությունը	Համատեքստային/Մուտքային ցուցիչ (որակական տեղեկատվություն)	Կատարելագործել ՄԿՈՒ համապատասխանությունն աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին Նպաստել աշխատունակությանը
No 10 **Ծրագրեր, որոնք օգտագործվում են՝ նպաստելու ՄԿՈՒ մուտքի ավելի լավ հնարավորությանը.** ա) տեղեկատվություն առկա ծրագրերի վերաբերյալ տարբեր մակարդակներում բ) նրանց արդյունավետության ակնհայտությունը	Գործընթացային ցուցիչ (որակական տեղեկատվություն)	Նպաստել ՄԿՈՒ մուտքի հնարավորությանը նաև հատուկ կարիքավոր խմբերի համար Աջակցել տեղայնացված ուսուցման ապահովմանը